

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 33

Գ. ՇՐՋԱՆ

17 ՕԳՈՍՏՈՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մագիստրատի քաղաքական քառամսեայ թիւնքն է Կ. Պոլսոյ համար Բաւարական զէ.
և քաղաքական համար Երեսն զէ., Կաթիկի վճարելի: Արտատպութեան 12 ֆրանկ կամ
5 տուրքի: Թղթաստական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ քառամսեայ քաղաք-
ական լրագրութիւն: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: Մագիստրատի
հրատարակ կ'ընէ ամեն շաբաթ սոսու: Այն քառամսեայները որոնք պակաս քան անգամ
են, պէտք է խնայեմ խնայեմ խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ ալ իսկական անար-
կութիւնները անհատներու չեն տրուիր:

Ձի հրատարակութեան անհատները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը տրուի 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسين مطبعه سنده «ماسيس» غرضه سی اداره سنده

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան 3. Մասքոստան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

Ի Բ Ա Ն Կ Ա Լ Թ Ի

46րդ Տ Ս Բ Ն Ե Ր Զ Ա Ն

Վարժարանն հաստատուած է 1857ին . նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական , բարոյական եւ գիտնական կրթութիւն մը : Վարժարանի վարչութիւնը՝ Վիէննայի Մխիթարեանց ձեռքն է : Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Մխարաններէ եւ վկայեալ արտաքին ուսուցիչներէ , պիտի կազմեն այս տարի 21 հոգի : Ուսմանց ծրագիրն է՝ արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջագիրը , որ կը համապատասխանէ գերմանական Բէալական դպրոցին (Realschule) յառաջագրին . բայց ըստ կարի յարմարցուած է այս ծրագիրը միջավայրի պիտոյից : Վարժարանիս կառարեալ ընթացքն աւարտող աշակերտները կրնան շատ դիւրութեամբ եւ առանց քննութեան Եւրոպայի ո եւ է բարձրագոյն վարժարանն յաճախել՝ ուսմունքը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ Վիէննա , Չուրիցիա եւ Գաղղիոյ քանի մը քաղաքները) եւ կամ կրնան վաճառականութեան ձեռնամուխ ըլլալ : Աւանդուած լեզուներն են՝ Հայ. Տճկ. Գաղղ. Գերմ. եւ Անգլ. (վերջին տարին) : Գաղղիերէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու եւ իրենց վրայ պիտի հսկեն երեք գաղղիացի Մարիսիներ , զորոնք յատկապէս բերել առաւ վարչութիւնու Բարիգէն : Այս տարի չորս պիտի ըլլայ ասոնց թիւը : Նոյնպէս գերմաներէնի համար հին ուսուցիչներէն զատ , ՆՈՐ մըն ալ բերել կուտայ այս տարի վարչութիւնու՝ Պերլինէն : Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամսացուցակ մը , որուն մէջ

մանրամասն կը նշմարուի աշակերտին բարոյական եւ ուսուցչական վիճակը , իւրաքանչիւր դասերու մէջ առած նիշերը եւն. : Վարժարանն կը զանուի ընդարձակ ծառայից պարտէզի մը մէջ . ունի իր յատուկ բժիշկն եւ իր դեղարանը : 1902-1903 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 2/15 Բչ. օրը : Դպրոցամուտի քննութիւնները պիտի կատարուին Օգոստ. ամսոյն 30ին եւ 31ին , իսկ դասերը կը սկսին կանոնաւորապէս Քչ. օրը՝ Սեպտ. 3ին : Հրատարակուած է վարժարանի հրդ տեղեկագիրը , եւ աշակերտք կրնան առնուլ զայն ամէն օր մինչեւ կէս օր : Վարժարանիս նկատմամբ ընդարձակագոյն տեղեկութիւններ ուղղող , թող խնդրէ վարժարանի վարչութիւնէն՝ վարժարանիս ծրագիրը , եւ կամ դիմէ հետեւեալ հասցէին՝

Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիչեան

Կ. Պոլիս, Բանկայթի

P. Gabriel Dr. Ménévichian

Constantinople, Pancaldi

Ռ Ո Պ Ե Ր Դ Բ Ո Լ Է Ճ

Վարժարանիս յառաջիկայ տարեջրվանց պիտի սկսի Երկուշաբթի Սեպտ. 2/15 : Կարգադրութիւններ եղած են նոր դիւրութիւններ տալու վաճառականական ուսմանց համար : Մնայուն բժիշկ մը՝ աշակերտաց առողջութեան , մարմնամարդներուն ու խաղերուն , ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ պիտի հսկէ : Այս տարի կը բացուի նաեւ փոքր տղայացատկարեալ նոր շէնքը , մասնաւոր հակոցութեան տակ , ուր կարելի պիտի ըլլայ այսուհետեւ մինչեւ տասը տարեկան աշակերտներ ընդունիլ :



ՌՈՍՒՍ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԵՄՔ

Ընկերութեան զրամագլուխը , ամբողջապէս վճարուած	10,667,667 ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ ու տոկոս	54,000 000 »
Երաշխաւորութեան գումար	122 000 000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400.000 »

Կեդրոնացեղի , Ղալաթիոյ ֆառափին վրայ , Մատաւոս Կին Տեղը
Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ԹԷՐԱԿԷ

Ընդհ. Բնէի
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ



ՄԱՍԻՆ

517 ՏԱՐԻ

— 17 ՕԳՈՍՏՈՍ 1902 —

ԹԻԻ 33



ՏԱՐԵԴԱՐԶ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԳԻՈՅ

Յնծութեան ջերմագին արտայայտութիւններով, եղական հանդիսաւորութեամբ և միահաղոյն սգեւորութեամբ յաւաքիկայ երկուշաբթի օր կը տօնուի ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ Գահակալութեան բարեկամական տարեգարձը՝ Օտմանեան ընդարձակածաւալ Կայսրութեան ամէն կողմը։ Մայրաքաղաքէն սկսեալ մինչև հեռաւոր գաւառները, ամէն ազգէ ժողովուրդը, Ն. Կ. Վեհափառութեան բերաւոր հաւատարիմ հպատակները, միաբերան մաղթանքներ կ'ուղղեն երկինք՝ Օգոստոսիան Վեհապետին արեւշատութեանը համար։ Թուրքիանակ օտարներն ինչպէս նաև օտար երկիր գանուող Օսմ. հպատակները նոյն խանդավառութեամբ և նոյն բերկրութեամբ կը տօնեն Կայսերական Գահակալութեան տարեգարձը, ջերմագին շնորհաւորութիւններով։ Այս բարեբաստիկ առիթով կատարելի ցերեկեայ հանդէսներէն ու գիշերային լուսավառութիւններէն զատ, որոնց համար ամենաշքեղ սրտաբաստութիւններ տեւնուած են, երկուշաբթի օրը կը փառաւորուի նաև մարդասիրական և հանրօգուտ ձեռնարկութեանց սկզբնաւորութեամբ՝ իբրև անմոռանալի յիշատակարաններ Ն. Կ. Վեհափառութեան երկրաշէն խորհուրդներուն և հայրախնամ հոգածութեան։ Այդ հայրապ ձեռնարկութիւնները աւելնալով այն անհամար հաստատութեանց վրայ, որոնցմով օժտուած է երկիրը՝ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ Գահակալութեան ի վեր, երախտագիտական նորանոր ու ջերմագին զգացումներ առաջ կը բերեն ժողովրդեան սրտին մէջ, զգացումներ որոնց արձագանգ կ'ըլլայ

ամէն օր մամուլը՝ արձանագրելով երկրին հսկայաքայլ յառաջդիմութիւնը :

Եւ արդարեւ, յորմէհետէ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍՐԸ բազմեցաւ Օսմանեան վառապանծ Գահուն վրայ, Նաւատորմը և Բա- նակը յարաճուն կերպով զօրացած են ու կը զօրանան, երկրին երմտական ու տնտեսական վարկը մեծապէս բարձրացած է, հանրօգուտ շինութիւնները, եր- կաթուղիները մանաւանդ, ահագին ծաւալ ստացած են, բարեգործական ու կրթական հաստատութիւնները բազմացած, երկրագործական ու արուեստագի- տական աշխատութիւնները նոր զարկ և միլոմ ստացած են, լրագրութիւնը բազմապատկուած ու զարգացած է, ու զեռ անթիւ անհամար գեղեցիկ ձեռ- նարկութիւններ ի գլուխ երած են, ամէնքն ալ ուղղակի Ն. Կ. Վեհափառութեան հանճարեղ մտքէն բղխած և բարձր հոգածութեանը աւարկայ : Մանաւորապէս հիւանդանոցները, անկերանոցները, աղքատները, անխտիր և յարածամ կը վա- յելեն Կայսերական լիաւատ շնորհներ ու նպաստներ, և անոնցմէ կը բարձրանան ազօրքի ու օրհնութեան միսունջներ տիւ և գիշեր :

Վեհ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ այս անգլուգական ձկրքեր ու խնաստութիւնը հիացմամբ և անխածանօր կը գիտուն նաև օտարներուն կողմէ, որոնք ամէն առթիւ կը դնահատեն Ն. Կ. Վեհափառութեան նուր գիւնագի- տութիւնը և բարձր զգացումները որոնց շնորհիւ Օսմանեան Կայսրութիւնը բա- րեկամական յարաբերութիւններ կը տածէ՝ բոլոր օտար պետութեանց հետ և պատկառելի գերք մը գրաւած է անոնց հանդէպ : Այն բոլոր վեհապետները, իշխանները և բարձրաստիճան հիւրերը՝ որոնք Օսմանեան հոյակապ ստանը կ'այ- ցելեն, անմուտնալի ու երախտագիտական յիշատակ մը կը սրահեն Կայսերական վեհաշուք հիւրընկալութենէն, և ինչպէս բնիկ՝ նոյնպէս օտար արուեստագէտ- ները, կ'արժանանան Ն. Կ. Վեհափառութեան քաջալերանքին :

Հանրային երախտագիտութեան արտայայտութեան գեղեցիկ առիթ մըն է Կայսերական Գահակալութեան բարեբաւարիկ տարեգարձը զոր մամուլն ալ կը տօնէ խանդավառութեամբ, թարգման հանգիստանալով այդ երախտագիտութեան և ժողովրդեան ամէն գասակարգերուն մալթանաց : Մաւխ եւս, որ իր յիստ- նըմէկ տարուան գոյութեան կէսէն աւելին և իր է՛ն բեղմնաւոր շրջանը բոլորած է ու կը բարբէ ընդ հովանեաւ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ և արժանացած է Ն. Կ. Վեհափառութեան շնորհներուն, իր խնարճ ձայնը միայնելով տեղական լրագրութեան ձայնին, կը մալթէ արեւշատութիւն և յարատեւ բարեբաւարութիւն Օսմանեան մեծալօր և լուսամիտ ինքնակալին, և Կայսերական Գահակալութեան բարեբաւարիկ տարեգարձին առթիւ ամէն կողմէ բարձրացող բարեմալթութեանց ձայնակից՝ կը գոչէ

ՅԱԻԷՏ ԿԵՅՅԷ

ՎԵՀ. ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼՆ ԹՈՒՐԲՈՅ

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻՆ ԵՌՈՒՋԸ

Յառաջիկայ երկուշարթի առաւօտ , Վեհ. Սուլթանին Գահակալութեան տարեդարձին առթիւ , գոհաբանական հանդիսաւոր մաղ-թանքներ պիտի կատարուին Մայր եկեղեց-ւոյ մէջ :

— Ս. Պատրիարք Հայրը երեքշարթի Կայս. Պալատ գնաց :

— Պատր. Փոխանորդ Տ. Գարրիէլ Կալիս-կոպոս՝ ընկերակցութեամբ Ա. գործակատար Յիզրան էֆ. Տէր-Ներսէսեանի ինչպէս նաեւ Խոստֆեան Տիգրան եւ Խորեան Գրիգոր Տէր-Ներսէսեան՝ երեքշարթի օրը Աստիլէի պաշ-տօնատունը երթալով , տեսակցութիւն մը ունեցաւ Դատական նախարար Բարձր. Ապ-տարիանի փաշայի , եւ յետոյ Կրօնական գործոց տեսուչ Վահմ. Զիլէր պէյի հետ :

— Խան Ժողովը գումարում մը ունեցաւ յորձարթի առաւօտ , Ս. Պատրիարքին նա-խազանութեամբ : Ներկայ էին , Կրօն. Ժողո-վէ՛ն Տ. Գրիգորիս արքեպիսկ. Յովհաննէս-եան , Տ. Եղիշէ Կալիսկ. Դուրեան , Փոխանորդ Սրբազանը եւ քահանայ անդամները . իսկ Դադ. Ժողովէն՝ Տիգրան էֆ. Եռասօֆեան , Գրիգոր էֆ. Խորեան , Միհրան էֆ. Սեթ-եան , Մկրտիչ էֆ. Ասատեան եւ Տիգրան էֆ. Տէր-Ներսէսեան :

Ս. Պատրիարք Հայրը Ժողովին հաղորդեց Սրբազանի գործոց մասին տեղեկութիւններ , եւ խորհրդակցութիւններ կատարուեցան :

— Երկրկիւր կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ Տ. Մովսէս Կալիսկ. , որուն Ա-տանա հասած ըլլալը հետագործած էր Պատ-րիարքարան , մեծ պատուով ընդունուել է եկեղեցական եւ աշխարհական բոլոր Ժողո-վականներուն կողմէ : Տ. Մովսէս Կալիսկոպոս անցաւ կիրակի առաւօտ Ժամերգութեանց ներկայ դասուելով՝ քարոզ մը խօսեր եւ իր պատմը բացատրել է , յորդորելով Ժողո-վորդը որ համերաշխ ուղով ջանան ընտրել այսպիսի կաթողիկոս մը որ Կայս. կառավա-րութեան վստահութիւնը գրաւած ըլլայ եւ երկրիկայ թեմականներուն եւ համայն Աղղին բաղձնաց համապատասխանէ : Սրբազանը բարեմաղթութիւններ ըրեր է Վեհ. Սուլթա-նին արեւշատութեանը համար :

ԳՈՒՄ.ԳԱՐՈՒԻ «ԱՂ.ԲԱՏԱՆԵՍԱՄ»,Ը

Սաացանք Գում-գարուի չորս թաղերու Աղքատախնամին ԺԶ. տարեշրջանի տեղեկա-դիրը (1901 մայիս 1է մինչեւ 1902 մայիս 30) որ ամիսփ ու մեկին համարաւորութիւն մըն է այդ բարեգոծական մարմինին տասներեք ամսուան գործառնութիւններուն : Այդ շրջա-նին մէջ , Աղքատախնամը դարմանել տուած է 912 հիւանդ , մեծագոյն մասը Տօքթ. Ալլահվէրսեան էֆ.ի ձեռքով , որ մանրամասնա-բար պարզած է իր դարմանումներուն ար-դեւնքը , հիւանդութեանց տեսակներովը , եւ բժշկական նօթերով որոնք շահեկանու-թենէ՛ դուրկ չեն : Գալով նիւթական մատա-կարարութեան , հասոյթը եղած է $47,333\frac{1}{4}$ զրշ. , որուն $13,095\frac{3}{4}$ ը նուիրատուութենէ , $9678\frac{1}{4}$ ը թատերական ներկայացումէ , 9512 ը բաժանորդագրութենէ , $6404\frac{1}{2}$ ը գանձանակէ , $6551\frac{1}{4}$ ը պնակէ , իսկ մնացեալը կալուածա-կան վարձք , արժեթղթերու տոկոս , զրա-մական շահ եւ Ժապաւինեալ առւար : Ծախ-քերու գլուխին մէջ գլխաւոր տեղը կը գրա-ւեն՝ ղեղօրէից վճարուած $10155\frac{1}{2}$ զրշ. , բժիշկի՛ 5200 , մխի եւ կաթի՛ $9993\frac{1}{4}$, ա-ծուխի՛ $1479\frac{1}{4}$, եւ մնացեալները՝ ընդհա-նուր ծախք , գործակատարի , հաւաքչի , քարտուղարի , Աւելցած հասոյթի գումարն է $9150\frac{3}{4}$:

Աղքատախնամը , իր յատուկ բժիշկը ու-նենալէ զառ , հիւանդներ յանձնարարած է նաեւ Տօքթ. Խորասանճեան էֆ.ի , Տօքթ. Աճէմեան պէյի , Տօքթ. Խնդիրեան էֆ.ի , Տօքթ. Էմէրեան էֆ.ի եւ Տօքթ. Տաաուր էֆ.ի որոնց ձրի եւ ճարտար դարմանումնե-րուն համար շնորհակալութիւն կը յայտնէ : Տնօրէն Խորհուրդը շնորհակալութեամբ կը յիշէ նաեւ թէ Յովհաննէս էֆ. Յակոբեան տարեկան 20 ոսկի նպատտ մը յատկացուցած է Աղքատախնամին , եւ Ս. Պատրիարքը՝ 15 ոսկի բաժին հանած է՝ Պ. Բօլ Սթէֆանովիչի կտակէն հայ աղքատներու զրկուած գու-մարէն :

«ԳՐԱԿԱՆ ԾԻՒՐԱԽՏ»

— 3 —

Գրական ծիրախտ . . .

Ահա բացատրութիւն մը նոյնքան տխուր որքան յատկանշական, որուն հեղինակ կը հանդիսանայ Արէտ՝ ինչպէս «Կրօնի հիւժարտ» բացատրութեան հայրութիւնը կը պատկանի Մուշեղ վարդապետին : Արեւելքի ներսուն աշխատակիցը, ո՛չ միայն իրբեւ գրող՝ այլ մանաւանդ իրբեւ ուսուցիչ, որ մօտէն զիտած, գննած է մեր նորաշատ սերունդին մտաւորական վիճակը, ամէն ձեռնհասութիւն ունէր անգամ մըն ալ իր կողմէ մէջտեղ դնելու այս հարցը, ինչպէս ըրաւ իր վերջին Շաքարթիան Նօթերովը, որոնց մեծագոյն մասը նուիրած է գրականութեան մարմաջովը սոչորող, համեստ աղաքներուն : Իր ուշադրաւ յօդուածէն կ'արտատուեմ առաջին քանի մը սուղերը .

«Գրական ծիրախտը ահագին ծաւալում գտած է մեր մէջ այս վերջին ժամանակներս : Այս հիւանդութեան ախտանիշը կամ շուրորդն է տեսակ մը մարմաջ՝ ստորագրութիւն դնելու յօդուածի մը տակ, գրական հրատարակի վրայ երեւալու տենդով խառն, որ հետզհետէ կը բարձրանայ՝ ենթարկելով հիւանդը տառապագին դառանցանքներու : Հիւանդութիւնը բուն ուղեղին մէջ կը կեդրոնանայ, եւ տակաւ կը տարածուի ջղային դրութեան մէջ ու կը փոխուի հիւժարտի, գրեթէ անգարմանելի : Ախտին մանրէները կ'աճին դպրոցական ջուրերու մէջ, եւ հէ՛ք աղաք զիրաւապարաստ գետիններ եւ անոնց մշակութեան համար : Որչա՛փ խեղճ պատանիներ զո՞հ կ'երթան այս անողոք հիւանդութեան, գրական ծիրախտին, հազիւ նախալրթական չըջան մը բողբոսած : Իրենց պատանեկութեան աշխոյժ տարիքը, ընդունակ դիտութիւն մը կամ արուեստ մը սորվելու, կը խա՛րի տարածամ գրական չարչարանքներու մէջ եւ վերջապէս ճարակ կ'ըլլայ հիւանդութեան» : Ու կ'եզրակացնէ, բազմակողմանի տեսութենէ մը ետքը, թէ այս հիւանդութիւնէն բռնուող աղաքը անօթի պիտի Մեծագոյն մասը՝ իրենց ստանաւորներուն

միան՝ բառին իսկական նշանակութեամբ՝ թշուառներ աւելցնելով ժողովրդային խաւերուն մէջ :

Արէտի խորհրդածութիւնները, այս նիւթին վրայ, դառն ու անողոք չեշտ մը ունին, որովհետեւ իրականութիւն մը կը պատկերացնեն, եւ եթէ «ախտավարակներուն ցնցում պիտի պատճառեն, գէթ կրնան սթափեցնել ու զգուշացնել այն պատանիները որոնք տակաւին չեն բռնուած «գրական ծիրախտ»էն : Այդ ծիրախտն ալ, ինչպէս շատ մը հիւանդութիւններ, իր զանազան ձեւերը ու տեսակները ունի, որոնցմէ մէկն է «բանաստեղծութեան ծիրախտ»ը որ պատկառ թուով միտքեր չի խամրեցներ, ապագայի ամէն մտածում, առարկէր ընտրութեան, ապրուստի միջոցներու հայթայթման ամէն կանխահօգութիւն վանելով : Աւելցուցէ՛ք ասոնց վրայ կանխատես մեղամտութիւնը որուն կը մատուցին ոտանաւոր գնելու մարմաջէն բռնուողները, նոյն իսկ երբ կը տեսնեն թէ չպիտի յաջողին չիտէ չիտակ երկու յանգ քով քովի բերել, ընկճումը զոր կը զգան իրենց «քերթուած»ներուն չի հրատարակուելէն, ու աչքի առջեւ կ'ունենանք երամ մը պատանիներու՝ մարմնով վտա, մաքով տարած, հոգիով յուսահատ :

Իմ մասին, առաջին անգամը չէ որ կը գրեմ այս նիւթին վրայ, ու վերջին չպիտի ըլլայ ապահովագէտ : Հայ գրական Հանդէսներու խմբագրատունները լուս վկաները կ'ըլլան «բանաստեղծութեան հիւժարտ»էն վարակուողներու անյապարհ ըղձանքին ու հալաւիքին՝ որոնց միակ նպատակահետքն է իրենց ոտանաւորները տպուած տեսնել : Սկսած արձակագիրները նոյն յամառութիւնը չունին . բայց ոտանաւոր գրողները կարեկցութեան արժանի են պարզապէս :

Ու այս սուղերը կը գրեմ, ո՛չ թէ հեգնելու, դատաւարտելու համար զանոնք, այլ անկեղծ արգահատանքով մը : Եթէ կարգալիք այդ ոտանաւորներուն ընկերացող նախնիները՝ երբեմն սրտածմելի ու արեւագին երբեմն յաւակնոտ ու խրոխտ, տարբեր տպաւորութիւն մը ու զգացում մը չպիտի կրէ՞ք

հրատարակութիւնը կը խնդրեն միմիայն քա-
լաքերու եւս համար, — իբր թէ պարբերա-
կան մը մարզարան մը ըլլար թերուս պատա-
հանութեան եւ անճարակ բանաստեղծներու, ա-
նոց ձափըռտուքները հիւրընկալելու սահ-
մանուած: Ո՞վ ներշնչեր է այս այլանդակ
զադախարը մեր կարգ մը աղաքներուն,
որոնք միօրինակ կերպով նոյն պահանջումը
կ'ընեն: Անոնցմէ մէկը, դեռ քանի մը օր
առաջ, սա եղական նամակով երկու ոտանա-
ւոր կը զրկէր Մասիսի հասցէին:

Այս անգամ Ձեր Խմբագրութեան կ'ուղղեմ երկու
կտոր ոտանաւոր գորոք տպել բարեմաճէիք վերոյիշեալ
ընթերցմէ, քաջալերելով զիս աւելիներն ընելու եւ աշ-
խատակցել Ձեր Գրական հանդեսին: Բայց ապահով
եմք, խմբագիր Տէր, քէ 100ին 100 յոյս չունիմ. պատ-
ճեն... վասն զի նոր եմ, եւ երեսո նայող մը չսկիտի
կտոր գտնել:

Դեռաւոր Պա՛րոն, կը սխալիք կարծելով
թէ նոր մը ըլլալնուդ համար երեսներդ նայող
մը կտկիտ գտնուի: Միթէ նոր չէ՞ին այսօրուան
կտորասարդ բանաստեղծներէն ու գրագէտնե-
րէն անոնք որ անձանօթ պատանիներ էին
դեռ չորս-հինգ կամ ինը—տասը տարի առաջ: Անոնք չի
յամառեցան սակայն իրենց սխալ-
ներով լեցուն նախափորձերը մամուլին յանձ-
նելու. գրեցին, սրբագրեցին, աշխատեցան,
կարգաւորեցին կարծիքը առին, եւ իրենց
կանխաձայն կարողութիւնը կամ բանաստեղ-
ծական հակումը գիտցան պատշաճապէս կի-
րարելու, եւ յետոյ, եթէ թուաբանական
կշռութեամբ 100ին 100 յոյս չունիք, ի՞նչ
հարկ մաքուրի դնելու եւ զրկելու նեղու-
թիւնը ստանձնել:

Շարունակենք նամակին ընթերցումը:

Հաստացէք, Տէր Խմբագիր — ներեցէք քացատ-
րութեան — գլուխիդ ցաւցնելու չափ սկիտի գրեմ ու
անցընել, մինչև որ օր մը ինքզինքս Մասիս աշխա-
տակից ըլլալու պատիւն ձեռք բերեմ:

Կարելի չէ՞ր արդեօք որ կանուխէն հրա-
մարտէք այդ պատիւին ըզձալէ, որով կ'աղա-
տէք թէ ինքզինքնիդ եւ թէ խմբագրու-
թիւնը, զուտ ցաւցնելու չափ ոտանաւորնե-
րու զէկեր զրկելու եւ ստանալու փոխադարձ
անձրոյթէն:

Յաջորդ տողերը սրտաշարժ են՝ մէկ խօս-
քով:

Ուզեցի անձամբ ձեզի ներկայանալ, բայց մի՛ գուցե
զիս քրանաստեղծ» անուանէին վրաս գլխուս նայելով,
քանի որ գործի օր չեմ կրնար մաքուր հագուիլ, եւ քե
այժմեան մօտա քանաստեղծութիւնը «վրայ գլուխէն» կը
հասկցուի եղեր (° °):

Կը խոստովանիմ թէ այս հոյակապ արձա-
կէն ետքը, ոտանաւորներուն վրայ աչք մը
ածել իսկ աւելորդ սեպեցի, քանի որ եր-
կուքն ալ նոյն միտքէն բղխած ու նոյն գրի-
չէն ելած էին:

Նամակագիրը միակը չէ իր տեսակին մէջ.
իրեն պէս մտածողները ստուար թիւ մը կը
կազմեն Պոլսոյ եւ գաւառի պատանիներուն
մէջ, զպրոցական կամ չըջանաւարտ: Անոնց
մէջ անանկներ ալ կան որոնք իբր թէ իրենք
չեն փափագիր իրենց ոտանաւորներուն հրա-
տարակութեանը եւ բարեկամ մը՝ ձեռքերնուն
խլելով՝ կը զրկէ այս կամ այն թերթին խմբա-
գրութեան: Գրութեանը աւելի յարգի ու ա-
ւելի անոյշ ցուցնելու հնարք մըն է արդեօք
այս միջոցը, թէ ոչ անկեղծ բան մը. դժուար
է ճշդելը: Ամէն պարագայի մէջ, գործադ-
րութեան եղանակը չա՛տ ոգորմելի է. դա-
տեցէ՛ք սա նմոյշէն: Գաւառացի Պարոն մըն է
գրողը, իրեւ ցանկացող իր մէկ բարեկամին
բանաստեղծութեանց հրատարակման:

Ներքիակ սկիտի գտնէք բարեկամիս՝ Պ. . . ի եր-
կու ոտանաւորները որոնք կարծեմ գերազանցապէս գե-
ղեցիկ ու յաջողակ սկիտի նկատուի, երբ գիտնալու ըլ-
լաք քե խնդիրը պարզապէս 16 տարեկան պարոնի մը
մը վրայ կը դառնայ. Ա՛յ հերիք որչափ ինքքի մէջ յուզ-
ուեցաւ ու յուզմունքը պատկերացուց ոտանաւորներու
տողանցումին մէջ, ու մի՛ միայն իմ մէջս. այլ հերիք որ-
քան սրտի ցաւեր կրեց ու իր ցաւերը պոռթկացուց ոտա-
նաւորներու մէջ: Հիմայ, գոնէ իմ խորնկակերպովս,
բո՛ղ ինք լոյս ելեւ, յուզուի ու յուզէ:

Նամակագիրը թանկագին ծանօթութիւն
մը կուտայ իր նամակին վերջը, աւելցնելով
թէ «Պ. . . վաճառականութեամբ կը զրադի
հիմայ եւ այս ոտանաւորները կարծելու կու-
գայ թէ հաշուեցուցակի թուղթերուն կռնակը
գրուած են»:

Տասնըվեց տարեկան պատանի մը վաճա-
ռակա՛ն, եւ վաճառական—քանաստեղծ: Տե-
սակին մէջ եղական չէ՞ք գտնել այս նմոյշը:

Խնդճ տղաքներ:

ԿԻԼԻԿԵԱՆ ՅՈՒՇՔԵՐ

ՍՍԵՅԻՆԵՐՈՒՆ ԱՄԱՐԱՆՈՅԸ

Սիսուան գետի դաշարաւէտ ափունքն ի վեր դէպի հիւսիսակողմը Սսոյ, երկու լայն ու ձիգ ճամբաներ զիրար կը խաչաձեւեն, մէկը Ատանայէն եւ միւսը Մարաշէն երկարածը ուսած :

Գետին քարակտմար կամուրջէն ասդին՝ դէպի Հաճըն տանող ճամբուն, արեւմտեան կողմը, կը տարածուի ձիարշաւի յատկացուած լայն ու ընդարձակ դաշտն ալ ուր ամէն կիրակի եւ ուրբաթ օրեր սովոր են Սսեցիներն իրենց գեղեցիկ ու սրարշաւ նոսրացներուն վրայ աշտանակած՝ զբոսնուլ :

Այս նշանաւոր ձիարշաւի սահմանէն քիչ մը անդին, ուր կը սկսին լեռները սանդխտաձեւ իրենց ժեռուտ բարձունքները ցոյց տալ, կ'երեւայ մանուածապատ արահեա մը ուղղակի Դրազարկի (*) հովոցքը առաջնորդող, ուր վերելակելու համար ստիպուած ես անցնիլ սոր ու ձոր մինչեւ սարահարթը Դրազարկի զոր կ'անջրպետեն անագին զառթափներ դերբուկ ելեւէջներով :

Կաթողիկոսանիստ մայրավանքէն քչիկ մը վար, ձիթենիներու եւ նարնջենիներու մէջէն կը տեսնուին դեռ վաղեմի հիւանդանոցի մը յետին հետքերը, կատարեալ հողրանքի մը վերածուած : Սսոյ դաշտօրայք փխրուն են ու բեղուն, հոն ձեռքերը ժիր երկրագործին՝ ցանած ցանցնած են ամէն զի յղկուղաւէտ այգեատաններ ու մրդաւէտ պարտէզներ մանաւանդ անուշաբոյր նարնջենիներու, որոնք այնքան առատ են Կիլիկիոյ տաք ու ծովեզերեայ մասերուն մէջ, Սսեցիները երկու գլխաւոր ամարանոցներ ունին. Դրազարկ եւ Վահկա. վերջինը երբեմն Կաթողիկոսներու հովոցքը եղած է, բայց Դրազարկը, որ ըստ տեղացւոց Չարաճալը ալ կը կոչուի, իր բնական գեղեցկութիւններով կը գերազանցէ միւս վանուց հովոցքները :

(*) Սսեցիներուն ամարանոցը :

Հոս, Դրազարկի տջն ու ձախ, հիւսիսն ու հարաւ, լեռնային բարձրութիւններ կան ամպամերձ, պարտէզներով շրջապատուած շէնքեր, մայրիկ ու եղււինի ծառեր երկնաբերձ ու հասարուն, ջրեր մեղրահամ ու աղբերակներ զուլալ : Բնութեան ընծայած այս առաւելութիւններուն պատճառաւ, Սսեցիները աւելի կը սիրեն Դրազարկը՝ քան միւս հովոցքները :

Այս վայրերը ոչ նուազ նշանաւոր եղած են իբր ուսմամբ ծաղկեալ մենաստաններ ի հետմէ, մանաւանդ Գրիգոր Կաթողիկոսի ժամանակ եւ անկից յետոյ Գէորգ Մեղրիկ կոչեցեալ վարդապետի աթոռակայութեան ատեն : Հոս թաղուած են բարեպաշտիկ Կաթողիկոսներ որով Դրազարկ ոչ միայն ամառանոցն է Սսեցիներուն, այլ միանգամայն ուխտատեղի :

Սսոյ վերջին Մկրտիչ Կաթողիկոսը միայն չսիրեց այս պատուական վայրերը, ուր կրնար Դրազարկի կամ միւս վանքերէն մէկը նորոգելով ամառները միաբան վարդապետներով մէկտեղ քանի մը ամիս մնալ, բայց Մկրտիչ Կաթողիկոս աւելի սիրած էր իր ծննդավայրը՝ Մարաշ՝ որուն արեւելեան կողմը շէնցուցած է բազմաթիւ ամարանոցներով, Սսեցիները չհամակրեցան այս Կաթողիկոսին, ինքն ալ Սսեցիներուն : Մկրտիչ Կաթողիկոս աւելի կ'ուզէր Այնթապ կամ Հալէպ փոխադրուիլ, եւ այդ պատճառաւ միշտ անհամաձայնութեան մէջ էր Սսեցիներուն հետ, որոնք ամէն տարի կ'առաջարկէին իրենք ամարանոցի համար Դրազարկ ելլել որ 7-8 ժամուան հեռաւորութիւն մը միայն ունի մայրավանքէն : Կաթողիկոսը՝ շատ անգամ առանց իմացնելու՝ կ'երթար իր Մարաշի ամարանոցը որ 4-5 օրուայ ճանրայ է :

Սսոյ Մայրավանքը ինչպէս էջմիածնի Մայր աթոռը, ամառները արդարեւ անբնակելի ըլլալու չափ տաք կընեն, եւ եթէ Մայր Աթոռը ունի իր հովոցքները՝ Սեւանայ, Հաղարծնի վանքերն ու Բիւրականի ամարանոցները, Սիսն ալ ունի իր Դրազարկի, Վահկայի եւ ուրիշ սքանչելի հովոցքներ, որոնք գերազանցօրէն կրնան փոսնել նոյն իսկ էն զփուարահաճ կամ զբոսոտէր եկեղեցականները :

ՀԱՅԵԼԻՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

Երբ Լիւտովիկ Ամպրիւս , իր սովորական որջը փնտռող վերաւորուած կենդանիի մը պէս , Բարիզէն խոյս տալով վերադարձաւ Լուրքէի դղեակը , իր ունեցած սաստիկ փշաք խոխուկեցաւ խոխոյն տեսակ մը միս-թիկ տափնապի որ յիշատակներու հեշտան-քովը կ'սպեւորուէր :

Հուրքէի դղեակը որ ձմեռուան մշուշին տակ ծածկուած էր հիմա , իր մանկութեան որոնք եղած էր . հոն էր որ երկու տարի առաջ իր կիները բերած էր , եւ վերջին ան-գամայն սեպտեմբերին , եկած էին դարձեալ , ինք աւելի իր սիրահար քան թէ ամուսին . բայց այս անգամ մինակն էր որ կուգար , Բարիզ ձգած իր վաղամեռիկ կիներ , թէեւ այս փշիկներ շատ բան թողած ըլլար իրմէ հար-սանեկան այս բնակարանին մէջ . հովանոցը եւ յարգէ գլխարկը , ամառուան մնացորդ-ներ , կը սպասէին անոր , տանը գաւիթը , եւ մեծ դարակներուն մէջ իր հոտովը պա-րուած հագուստներ կը մնային դեռ . Սեղանին վրայ ձգուած էր գիրք մը իր հաս-ցին կրող նամակի պահարանով մը . եւ իր մեքենով պատուհանէն կախուած կը կենար լոյսած ծաղկեփունջ մը որուն ոչ ոք պիտի նամարձակէր դպչիլ վախճալով որ չըլլայ թէ վար թափի փոշիի պէս :

Լիւտովիկ զարմացաւ զգալով թէ կոր-ուած կեանքի մը բոլոր այս որոշ յիշատակ-ները չէին կրցած սաստկապէս վերաւորել իր փշաք , ինչպէս որ եղած էր Բարիզի իրենց պայթիմանին մէջ ուր Լուրքէթ մեռած էր : Ընթացող տարիներէն այնպէս կուգար իրեն թէ ինչ որ իր կնոջմէն մնացած էր Հուրքէի մէջ , ա-ւելի քնացողի քան թէ մեռնողի մը սպաւո-րութիւնը կը թողուր , Հուրքէի Լուրքէթը կը թուէր պարիլ դեռ . միայն իր բացակայու-թիւնը կար եւ բոլոր այն առարկաները որոնց իր մասը դպցուցած էր՝ կը քնանային իր հոն լիցած ատենը : Անիկա պիտի վերադառնար

որին մէկը եւ ամէն բան պիտի ապրէր դար-ձեալ :

Պիտի վերադառնա՛ր . . . Լիւտովիկ ցա-ւազին բաժանումներու հետեւանքէն տառա-պողի մը տափնապը կ'ուռնենար : Իր կիներ նո-րէն տեսնելու համար , ըլլայ երազին , ըլլայ ցնորքի մը մէջ , նոյն իսկ խենդութեան մէջ , Լիւտովիկ պիտի գոհէր իր մնացորդ օրերը . — իրիկունը , ջանքեր կընէր պատրաստելու այս երազը , Լուրքէթի դիմագծերը , հա-գուստը ու շարժումները միաքը բերելով . աւա՛ղ , քունը ամէն բան կ'առնէր կը տանէր եւ Լիւտովիկ ուրիշ շատ մը ախուր բաներ երազելով կ'անցընէր գիշերը . ինքզինքը կը պեսնէր գերեզմանի մը մէջ թափառող , սեւեր հագած մարդիկներու հետ խօսակցե-լով , իր բարեկամներուն կողմէ եկած միտիթա-րական նամակներու պատասխաններ պատ-րաստելով :

Բայց Լուրքէթի ուրուակածը կը փախչէր , յամառօրէն խոյս կուտար այս ախուր երազ-ներէն :

— Կինս նորէն տեսնելու միջոց մը չկա՞յ արդեօք , կը մտածէր : Արդի գիտութիւնը որ այնքան զօրաւոր բաներ կը տարրալուծէ , չէ՞ կարող միթէ այս փախստական երազը պատ-րաստել իմ մէջս :

Խնդիրը բացաւ գիւղին միակ դրացիին զոր կը հիւրընկալէր երբեմն . Մերուկ բժիշկ մըն էր , զործէ քաշուած , եւ կը բնակէր Հուրքէէն մէկ քիլոմէթրի չափ հեռու հա-մեստ տան մը մէջ : Երկար ատենէ ի վեր ինքն ալ այրի , Տօքթօր Սէփուր միակ զա-ւակ մը ունէր , Մարթ , գեղեցիկ եւ խոհուն աղջիկ մը , Ժիւնիօնի աչքերով , մեծաշուք հասակով , որ , հակառակ իր քառնեքթը տա-րիներուն , կը թուէր մտածած չըլլալ բնաւ ամուսնութեան . խելացի՛ բայց երկչոտ , գիւ-ղացի բժիշկը իր ժամանակը կ'անցընէր չոր ու ցամաք ուսումնասիրութիւններով , եւ համութիւն չունենալուն՝ գտած ըլլալ կը կար-ծէր ինչ որ ուրիշներ գտած էին արդէն իրմէ առաջ :

— Բարեկամ , ըսաւ , Լիւտովիկի հարցու-մին պատասխանելով , ինքզինքնիդ մի՛ յոգ-

նեցնէ՞ք երազելու տենջին համար . ես ալ ունեցայ այդ խայթող ու հրապուրիչ յոյսը , այն օրը որ , ձերինն պէս , կորսնցուցի կրնա զոր կը պաշտէի . բայց երբեք չկրցի երազել զայն , կը հասկնա՞ք , երբե՛ք . . . Եւ եթէ , ինչպէս կը կարծեմ , մարմնով առողջ էք , եւ միտքով արթուն , բնա՛ւ չալիտի տեսնէ՞ք ձեր կինը . . . այսպէս աւելի ալէկ է , հաւտացէ՞ք ինծի . — ընտթեան հետ հակասութեան մէջ չապրինք . յիշատակները կը ցնդին , ժամանակը կ'ոչնչացնէ պատկերները . — համակերպիլ գիտնանք . ես , աղջկանս համար բարեցայ եւ իմ աշխատութիւններուս տուր ինքզինքս . դեռ երեսուն տարեկան չի կաք , կրկին անգամ կ'ամուսնանաք եւ կեանքերնիդ կը վերակսի . . .

— Եղած բան չէ՛ , վճռեց աշխուժիւ Լիւտովիկ :

Իր աչքերը հանդիպեցան Մարթ Սէփուրի երկար սեւ թարթիչներուն . — «Սա աղջիկը գեղեցիկ է ու պարկեշտ , մտածեց . տարտամ նախազգացում մը ունիմ թէ անհաճոյ չեմ իրեն եւ իմ վիշտս կը հետաքրքրէ զինքը . բայց ամբողջ էութիւնս կը բողոքէ , կ'ապրտամբի քանի կը մտածեմ՝ զինքը կամ իրեն պէս ուրիշ մը հրաւիրել այն անկողնին մէջ ուր Լուիզէթ կը քնանար , գլուխը սրտիս վրայ» :

Լիւտովիկ շարունակեց իր ցաւազին ու միանգամայն հեշտին համոռութի , ծիւրումի կեանքը , կնոջը յիշատակներովը լեցուն : Ձանձրոյթ չէր ունենար , թէեւ աշխատելու տուած չըլլար ինքզինքը . միայն կը մտածէր , դանդաղօրէն , խղճմտօրէն , ախուր բաներու : Յորեկները տարբեր չէին գիշերներէն , միայն թէ գիշերուան թուրութիւնը աւելի խորունկ էր եւ ակամայ . օրէ օր սեժը կը կորսնցնէր Լիւտովիկ եւ ինքզինքը քնած ասուն , մեռնելու յոյսը կը ծնէր ներսիդին :

«Ի՛նչ աղէկ կըլլար եթէ այսպէս վերնայի մէջտեղէն , կամայ կամաց , անոր սիրոյն» կը մտածէր :

Իրիկուն մը , իր ննջասենեակը մտած աւտին , ճիշդ այն վայրկեանին որ դուռը կը կը բանար , լամբարը ձեռքը , յստակ կերպով մը փնտռեց , անվերջանալի ցորեկները կար-

նչմարեց՝ պատուհանին քով դրուած մեծ նալիին մէջ , իր կնոջ պատկերը : Այո՛ , վայրկեանի մը համար Լուիզէթը տեսաւ հոն , այն կիսովին պայծառ ցօլացումին մէջ զոր հայելին կրնէ մուրթին , այնպէս ինչպէս որ անսած էր յաճախ զինքը , աշնան , սեւ կրիւններով շինուած բարակ կտուէ հագուստով :

Վայրկեան մը միայն եւ տեսիլքը անկեւտացած էր . հայելին մէջ՝ որուն մօտեցա՛ւ իր դէմքը կը տեսնէր հիմա . . .

Լիւտովիկ չէր խրաշած այս երեւումէն , ընդհակառակը , միտթարուեցաւ եւ զտաթ զգաց ինքզինքը . կնոջ ուրուականը հաւտած էր վերջապէս երեւնալ իրեն . խօսեցաւ անոր հետ , շնորհակալութիւն յայտնեց , խնդրելով որ՝ ա՛լ երեսի վրայ չձգէ զինքը : Դիշերը հանդարտ քնացաւ եւ Հուրքէ վերադառնալէն ի վեր առաջին անգամ ըլլալով իր երազներէն ոչ մէկը խռովեց զինքը :

Ամբողջ հետեւեալ օրը անհամբեր վիճակի մը մէջ անցուց , սպասելով որ իրիկուն ըլլայ , Լուիզէթը տեսնելու համար դարձեալ նախազգացում մը կ'ունենար թէ պիտի տեսնէր զայն անպատճառ : Նախօրը գիշերուան պէս ճիշդ միեւնոյն ժամուն սենեակը ելաւ , փորձեց ճիշդ նոյն կերպով դուռը բանալ լամբարը ձեռքը : Լոյսը որ բաց դուռնէն ներս խռժած էր իսկոյն , հայելին վրայ անդրադարձաւ եւ առջի օրուան պէս , Լուիզէթի ժպտուն գէմքը երեւցաւ պահ մը եւ անկեւտացաւ :

Այդ օրէն վերջ , Լիւտովիկ Ամպրիւսի կեանքը կապուեցաւ վայրկեանի մը համար ունեցած երջանկութեանը որ ամէն գիշեր ձեւաւորուող իրօրէն կը շնորհուէր իրեն . ցորեկները անառնելի կերպով երկար կ'երեւային Լիւտովիկ կը թուէր նմանիլ սիրահարի մը որուն գիշերուան այս ինչ ժամուն ժամադրութիւն մը արուած է եւ իր սիրտհամոռութիւն մէջ արեւէն կ'առնէ բարկութիւնը : Սպասելու ցաւը իր սիրտը կը ցամքեցնէր եւ առաջուան պէս չէր կրնար մտածել Լուիզէթի , միեւնոյն հոն . դարտութեամբ , ժամանակը անցընելու միջոց

նկնելու յոյսով : Գարունը կը մօտենար իր հետ բերելով գիւղի եւ գաշտի աշխատութիւններու հրապոյրը : Սկսաւ իր հողերուն հոգ տանիլ եւ յաճախ այցելութիւն տուաւ զրացի բժիշկին եւ անոր աղջկանը, զանոնք ալ Հուրքէ հրաւիրելով : Բայց իրական կեանքի բոլոր այս բաներէն իր հոգին խոյս կուտար, կը բացակայէր : Միմիայն կ'ապրէր այն անբացատրելի, անխոստովանելի վայրկեանին համար ուր ամէն իրիկուն, հազիւ թէ լուսաւորուած հայելիին մէջ իր կնոջ գէմքը պիտի ժպտէր իրեն :

Գարունը եկած էր, իր զով գիշերներով, գաղջ ցորեկներով, յանկարծական անձրեւներով որոնք հողը կ'երկատասարդացնեն, Տարօրինակ թուութիւն մը պաշարեց Լիւտովիկը, վերստաւ կատաղօրէն փափագիլ տեսնելու մարմինը անոր որուն փախստական գէմքը ընդմարած էր մինչեւ այն վայրկեանին, տուներին մը պէս, եւ կշտացած անով, բայց հիմա կ'աղօթէր անոր համար, ինչպէս սուրբի մը, Տիրամօր պատկերի մը առջեւ : Խնդրեց կնոջմէն որ անձանութ հորիզոններէ վար իջնելով, գայ այցելութիւն տայ իրեն, գոնէ երազին մէջ, թող տալով որ քսուի, մօտենայ անոր : Աւա՞ղ, այս անգամ ալ երազները յամանեցան եւ Լուիզէթ չտուաւ իրեն, գոնէ երազի մէջ, փափագուած համբոյրը . . .

Սակայն, տեսիլքը կ'երեւնար միշտ, ամէն իրիկուն, վայրկեանի մը համար կենդանացնելով հայելիին անշարժութիւնը . . .

Հուրքէի մենակեացը գունատեցաւ, նիւարացաւ, հալեցաւ : Դրացի բժիշկը յանդիմանեց զինքը :

— Մարդ խենդ ըլլալու է այսպէս կապուելու համար իր վիշտերուն : աս ի՞նչ կեանք է վարածդ, այս տարիքիդ մէջ : Զղային հիւանդութեան մը պատճառ պիտի տա՞ս : մեկնէ հասկէ՞, գնա՛ ճամբորդէ, ինքզինքէ՛դ դուրս ելի՛ր քիչ մը . . .

Լիւտովիկ զրուիքը կ'երեւոյնէր : «Չէ՛, հոս չառաղէկ եմ . . .» Բայց կը զգար թէ Սէփուր իրաւունք ունէր : տեսիլքի մը համար կամաց կամաց պիտի փճանար, պիտի մեռնէր ինքը :

— Բայց, քանի որ Լուիզէթէն զատ ուրիշ

կին մը չեմ կրնար սիրել, կը մտածէր, հետեւաբար դարձան չկայ տառապանքիս :

Մարտի վերջերը, իրիկուն մը, Տօքթօր Սէփուր եւ իր աղջիկը Հուրքէ ճաշած էին : Լիւտովիկ մինչեւ տանը դուռը առաջնորդեց զանոնք, երբ յանկարծ Մարթ նշմարեց որ շալը սալօնը մոռցած էր : Լիւտովիկ վազեց վեր ելաւ փնտռելու համար, բայց վար իջնելու ուշացած ըլլալով, Մարթ իր կարգին վեր ելաւ, մինչդեռ բժիշկը սիկառ մը կը վառէր գաւիթը : Մէկ քանի վայրկեաններ անցած էին եւ շալը չէր գտնուած : յանկարծ Լիւտովիկ տեսաւ զայն կէս մը գետին ինկած, աթոռի մը ետին : գետնէն վերցուց եւ Մարթի երկարեց : Ի՞նքն էր, աղջիկն էր : անձանութ զօրութիւն որ զիրենք իրարու թեւերուն մէջ նստած էր, հակառակ իրենց կամքին : Իրենց շրթուները համբոյրի մը մէջ միացած էին, առանց բառ մը արտասանած ըլլալու եւ իրենց համբոյրը կ'երկարէր, ամէն բան կը մոռնային, երբ տարօրինակ աղմուկ մը — մատնիի մը ապակիին վրայ զարնուած ատեն հանած ձայնին պէս — բաժնեց զանոնք իրարմէ :

— Ի՞նչ է այս ձայնը, միմեջեց Մարթ :

— Չեմ գիտեր որ . . .

Նոյն միջոցին բժիշկին ձայնը կ'իմացուէր վարէն . . .

— Ո՞ւր մնացիք, տղաք . . .

Վար իջան : Մարթ գէմքին կարմրութիւնը պահեց շալին տանթէլներուն մէջ, Սէփուր ձեռքը սեղմեց Լիւտովիկի եւ մեկնեցան :

Մինակը, Լիւտովիկ գոցեց, կղպեց դուռը : Իր սենեակը կըլելու եւ խորհրդաւոր ժամագրութեան ներկայ գտնուելու ժամը եկած էր : «Լուիզէթը չի պիտի գայ այս գիշեր, կը մտածէր . . . խաբեցի զինքը . . . աս ի՞նչու ըրի այս բանը . . .» :

Մեղմաքայլ վեր ելաւ . . . սովորական շարժումներով քաշեց, մտաւ սենեակը, լամպարին լոյսը խաղաց մերկ հայելին վրայ առանց սովորական արտացոլումին . . . իրաւէն էր ուրեմն . . . Լուիզէթ փախած էր : Լիւտովիկ հայելին մօտեցաւ, իր գէմքը միայն

երեւցաւ, մէջտեղէն երկուքի ճեղքուած,
կարծես դանակի հարուածով մը:

Ամբողջ լայնքովը, բարակ ճեղք մը մէջտե-
ղէն կտարած՝ երկուքի բաժնած էր հայելին:

Թարգմ. **ՏՕՄԻՆՕ**

ՄԱՌՍԷԼ ԲՈՒՎՕ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԿԻ ԻԶՄԻՐԷՆ

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնս պատա-
պարելոց համար նպաստի աղբիւր մը գոյա-
ցնելու դիտաւորութեամբ ձեռնարկած է նոյն
Հաստատութեան մէջ մասնաւոր վայր մը
պատրաստել, ուր պիտի ցուցադրուին յու-
ղարկաւորութեան, մեռելոցի, ննջելնիոց
տարեդարձի եւ այլ նմանօրինակ պարագայից
յատկացեալ արուեստական ծաղկեպսակներ՝
յոյժ ճաշակաւոր կերպիւ յօրինուած եւ ֆռան-
կաց թաղի վաճառումներէն իրապէս զեղչեալ
գիններով:

Հոգաբարձութիւնս լիայոյս է թէ արդոյ
հասարակութիւնը պիտի փութայ արդեամբ
պատասխանել մեր հրաւերին, անգամ մը եւս
ապացուցանելով՝ թէ գիտէ ամէն առիթէ
օգուտ քաղել Հիւանդանոցին զարգացման եւ
պայծառութեան մասին եղած ջանքերը քա-
ջալերելու համար:

Ի դիմաց Հոգաբարձութեան Ս. Լուսաւորիչ Հիւանդանոցի
Ասեմադպիր Ասեմապետ
ՅՈՎ. Գ. ԲԱՐԱՋԵԱՆ **ՆՇԱՆ Յ. ՀԱՐՍԵՑ**
Իզմիր, 12 Օգոստոս

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Նգիպսաբնակ Մեղքոնեան եղբայրները,
որոնք ծխախոտի ընդարձակ գործառնութիւն-
ներ կընեն եւ ամէն առիթիւ չեն զլացած
իրենց նպաստը՝ կրթական ու բարեգործական
պէտքերու, իրենց վաճառատան մէջ, ի Գա-
հրէ, Օգնութեան Մնտուկ մը հաստատած
էին՝ արդիւնքը ամբողջովին յատկացնելու հա-
մար Կեսարիոյ դպրոցներուն եւ աղքատիկ
աղաքներուն: Այս մնտուկին առաջին տար-
ւան հասոյթը եղած է 80 ոսկի, յաջորդինը՝

անցեալ տարի՝ 90 ոսկի եւ այս տարւանը
120 ոսկի, որոնք ամբողջովին յատկացուած
են իրենց նպատակին՝ Կեսարիոյ առաջնորդ
Տ. Տրդատ եպիսկ. Պալեանի միջոցաւ որ ա-
մէն տարի, Ս. Կարապետ վանքին մէջ, պա-
տարագ մատուցանել կուտայ Մեղքոնեան եղ-
բայրց ննջեցեալներուն հոգւոյն:

Մարգարեան Գրատուցը արձանագրու-
թեան տեսրակ մը բացած է՝ Պոլսոյ կամգա-
ւառային վարժարաններուն մէջ պաշտօն
ստանձնել փափագող ուսուցիչներուն եւ ու-
սուցչուհիներուն համար: Վահրամ էֆ. Մար-
գարեան, այդ Գրատան Տնօրէնը, չըբա-
րականով մը կը ծանուցանէ թէ այս արձա-
նագրութեանց համար որ եւ է փոխարկու-
թիւն չի պահանջեր եւ չընդունիր: Իր միակ
պայմանը սա է որ, իր միջոցաւ ուսուցա-
կան պաշտօնի կոչուողները մէյմէկ օսմ. ոսկի
նպաստ վճարեն Ուսուցիչներուն Օգնութեան
Մնտուկին: Այս կարգադրութեամբ, Մար-
գարեան Գրատունը կրկնապէս օգտակար կը
հանդիսանայ. նախ, մարդասիրական գործի մը
սկզբնաւորութիւնը կընէ, եւ յետոյ՝ առիթ
կուտայ մեզի յիշելու Ուսուցիչներու Օգնու-
թեան Մնտուկը որուն սնունդը իսկ ա՛յլ չի
լսուիր ժամանակէ մը ի վեր:

Տիարպէֆիլի մէջ բանտարկուած 16 Զըն-
գուցի Հայերուն եռամեայ պայմանաժամը
լրացած ըլլալով, արձակուելու են բանտէն:
Արձակուածները մաղթանքներ ըրեր են վեհ.
Կայսեր արեւշատութեանը համար:

Աւփիարեան Գեղապայծառ, Հայ-Հոռ-
մէականաց Պատր. Փոխանորդը, որ Կարին
կը գտնուի՝ առաջնորդարանի գործերը քննելու
պաշտօնով, մեծարալից ու սիրալիր ընդու-
նելութեան մը առարկայ եղեր է նաեւ մեր
աղգայիններուն կողմէ եւ այցելիք է, ի մէջ
այլոց, Սանասարեան վարժարանը ինչպէս
նաեւ Կարմիր Վանքի որբանոցը:

Աւփիկեան Տրիպոլսէն կը գրեն Բիւզան-
դիոնի, թէ տեղւոյն աղգայիններուն հոգե-
ւոր խնամքէ գուրկ վիճակը կը շարունակէ:
Ո՛չ եկեղեցի ունին, ո՛չ եկեղեցական: Ա-
մուսնացողներ կան՝ պսակող չկայ. մեռնող-
ները առանց արարողութեան կը թաղուին,
աղաքը անկունք կը մեծնան: Յոյն կղերք

որ եւ է ծառայութիւն չընէր, յուսալով այս
կերպով ամէնքը մէկէն Օրթոտոքսութեան
դարձած տեսնել :

Գրիգոր Խան եւ Տիկին Շամաանճեան
որոնք Մարիէնպատի ջերմուկները կը գրա-
նաւէին, մայրաքաղաքս վերադարձան :

Օսեսայի մէջ վերջերս մեռնող մեծահա-
բուտ եւ աղնուական Հայու մը վրայ սա-
նաւորքաշարժ ծանօթութիւնները կը հա-
զարէրէր Լ. Հերըզի թղթակիցը Օտեսայէն . —

«Մանուկայէ իշխանը իր քաղաքային ա-
զարանքին մէջ մեռաւ յՕտեսա անցեալ չո-
րեքշաբթի, 46 տարեկան, եւ իր մարմինը
Օրտա. 4/17ին դրուեցաւ ընտանեկան դա-
մբարանին մէջ ի Կանքեսդի, Պեսարապի :

Մանուկայէն ընտանիքը ընդ թուրքիացի
չայ է, ինչպէս անունէն ալ կը հասկցուի,
Մանուկ, անդիւրեքէն էմմանուէլ . եւ Պէյ
Թարքիոյ յատուկ պատուոյ տիտղոս, Հան-

գուցեալը ամուրի էր, եւ իշխանական (Քնեազ)
տիտղոսն ունեցող երրորդ եւ վերջին անգամը
եղաւ նոյն գերդաստանին : Նիքոլա Ա. Կայսրն
էր որ 1830ին այս Քնեազ տիտղոսը չնորհեց

գերդաստանին հիմնադրին, Մանուկայէ կը
թողու երեք քոյրեր, իշխանուհի Մատի Մա-
նուկայէ, Մարքիզուհի տի Սքիտոնի (Խա-
լացի) եւ Հացֆէլտ Կոմսուհին (Գերմանացի),

որոնք երեքն ալ, նաեւ Սքիտոնի Մարքիզն
եւ Հացֆէլտ Կոմսը, ներկայ են այսօր (17
Օգոստ.) յուզարկաւորութեան արարողու-

թեան, Հանգուցիոյն մայրը Դէլեանեանց
գերդաստանէն էր, քոյր հանգուցեալ հայ-
ազգի Կոմս Դէլեանովի, բազում տարիներ

կրթական նախարարը Ռուսական Կայսրու-
թեան, Մանուկայէնանք Պեսարապիոյ մէջ
ամէնէն ընդարձակ եւ ամէնէն կարեւոր կա-
ռածներն ունին, եւ ամէնէն հարուստն են

Նոյն Կուսակալութեան ազարակաւորներուն
մէջ, Հանգուցեալ իշխանը, Գրիգոր Յովհան-
նէսեան Մանուկայէ, տարեկան 800,000 բուլլի-

զատ եկամուտ կըտանար, Կանքեսդիի ըն-
տանական ապարանքը Պեսարապիոյ Կուսա-
կալութեան ամենապեղեցիկ զգեստն է, եւ

Մանուկայէնանք իրենց հողերուն վրայ հինգ
հազարէ աւելի զեղացի վարձակալներ ունին,
նախկին ճորտեր, եւ այժմ լոկ վարձակալ :

Մանուկայէ իր շարժուն եւ անշարժ սոսոց-
ուածքին ամբողջութիւնը, հաւասար բաժին-
ներով, թողոյց իր երեք քոյրերուն, եւ հա-
ւանորէն, քոյրերն անմիջապէս պիտի ծախն
ամէն բան եւ արդիւնքը պիտի բաժնեն
մէջերնին, քանի որ անոնցմէ ո՛չ մէկը Ռու-
սիոյ մէջ կը բնակի : »

ՄԱՍԻՍԻ այն գաւառային գործակալնե-
րէն որոնք սակաւին չեն փակած ներկայ
սարեւրջանի հաշիւները, կը խնդրենք որ
հաճին մնացորդ բաժանորդագիւցները գա-
նելով փութացնել մեզ, եւ կամ խմբագրու-
թեանս հաղորդել իրենց պարտքի սակաւին
չի վնասող բաժանորդներուն անունները :

Ս Ա Ն Ա Ս Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն ԻՔ. Տարեւրջան 1902-1903.

Վարժարանիս ԻՔ. տարեւրջանը կը սկսի
յառաջիկայ (1902) սեպտեմբեր 1ին : Նորեկ
աշակերտաց մուտքի քննութիւնները տեղի
իւրեննան օգոստոս 30ին եւ 31ին, իսկ դա-
սերը կանոնաւորապէս կը սկսին սեպտեմբեր
2ին, Բշ. օր

Թոշակաւոր դիւերթիւ աշակերտաց ըն-
դունելութեան համար վարժարանս ունի եր-
կու տեսակ պայման : — Պէտք է վճարել .

Ա. Միանուագ մուտք՝ 3 օսմ. ոսկի : Տա-
րեթոշակ 20 օսմ. ոսկի : Արձակուրդի տուրք
1 օսմ. ոսկի : Բոլոր ծախքերը վարժարանիս
վրայ են :

Բ. Առանց մուտքի, 12 օսմ. ոսկի տարե-
թոշակ եւ 1 ոսկի արձակուրդի տուրք, պայ-
մանաւ սակայն որ աշակերտաց ծնողք հոգան
իրենց դաւակաց զգեստի, կօշիկի, կարկտան-
քի, դասագրոց եւ դպրոցական այլ պիտոյից,
մահճակալի եւ անկողնոյ, ինչպէս նաեւ դե-
ղորէից ծախքը, իսկ վարժարանս կու տայ
սնունդ, ուսում եւ կը հոգայ լուսացքի, ըր-
ժիչի եւ այլ ծախքերը :

Յերեկայ թոշակաւորները պարտին վճա-
րել 6 օսմ. ոսկի :

Մանրամասն տեղեկութեանց համար, ծնողք
կամ պաշտպանք կրնան դիմել Կ. Պոլիս,
Պատրիարքարանը, կամ Կարին, վարժարա-
նիս տեսչութեան : — Յառաջիկայ տարի նոր
ձրիավարժներ չպիտի ընդունուին . այդ մասին
տեղի ունենալիք ո՛ր եւ է դիմում առանց հե-
տեւանքի պիտի մնայ :

Կարին Տեսչութիւն Սանասարեան Վարժարանի

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ՌՕՍԷՆ ՏՕՐԻՆԵԱՔԻ ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Ե. Գ.ՈՒԽ

Տարօրինակ անյայտացում երկու Հնդիկներուն. — Կատաղի վազք մը դէպի լեռը. — Յուսահատ հետապնդում. — Թափառում գիշերուան մէջ. — Լեռը փչելու վրայ. — Կայծեր՝ որոնք գետնէն դուրս կ'ելլեն. — Քուն եւ գարբնում. — «Ո՛վ ես դուն». — Կռապաշտներուն բոյնը. — Ոսկիի լեռ մը — Վտանգաւոր վայրեր. — Ազատարար Բօլը. — Ուր Ռօմէն ա'Յրինեաք վերջացէս կը գտնէ Տօմէնիօն եւ Օնօրիօն — Նորէն ձիու քալան մը :

Յաջորդ առաւուն կանուխ ճամբայ ելանք եւ անցանք Շաքալէօզու գետէն : Այդ գետը բազմաթիւ ձիւղերու բաժնուած է, որոնցմէ մէկը կը կրէ Առօթ աէ լօղ Հուէզօս (Անապուռներու գետ) անունը, կը պատմեն անոր մասին թէ սարսափելի փոթորիկի մը միջոցին, հազարաւոր կենդանիներ յանկարծակիի եկած նետուած են այդ գետին մէջ եւ հոն մեռած : Այդպէսով հասանք մինչեւ Թինթա լեռներուն շարքը, ուր երկու ընկերներս կենալով սկսան ուշադրութեամբ քննել լեռնաշարին ամէնէն բարձր սարը, Բիէթա աէ լա Խաօլթօնին : — Ի՞նչ կը նայիք այդպէս, հարցուցի իրենց :

Բայց յանկարծ, փոխանակ ինծի պատասխանելու, երկուքը մէկ խմբին ձիւրնին եւ անօրինակ արագութեամբ մը դէպի սարը սուրալ սկսան : Հակառակ ջանքերու՝ չկրցայ իրենց միանալ : Իմ ձիս գէշ չէր վազեր, բայց հետս կար նաեւ ուրիշ ձի մը՝ զոր պէտք էր որ միասին վազցնէի, եւ որ առկայի երեք չէր ուղեր իր ընթացքը երազելու : Այդ ձին մէկն էր այն ձիւրէն որոնք Շիքո-բաբայի եւ իր երկու ընկերներուն կը պատկանէին : Վերջապէս, անոնց միանալէ յաւաստած, կեցուցի ձիուս վազքը եւ սկսայ դանդաղօրէն միայն յառաջանալ : Զիւրուռ ուղածն ալ ատ էր արդէն : Աւելորդ է ըսել թէ անմիջապէս սկսայ մտածել ընկերներուս տարօրինակ վարմունքին վրայ : Ի՞նչ տեսած

էին սարին կտաարը. ո՞ւր գացած էին այդպէս արշաւասոյր : Զորս զիս կը խռովէ ուշադիր, բայց բան մը չէի տեսներ : Սքանչելի տեսարան մը պարզուած էր առջիս. Ժայռեր ամէն կողմ, հսկայ Ժայռեր, մասամբ մառապատ : Պահ մը երկու անցք մէկէն գալ առջիս. ատոնցմէ ո՞րը պէտք էի ընտրել : Ի՞նչ գիտնայի : Մտայ մէկուն մէջ, բայց քանի՜ կը յառաջանայի, այնքան անցք կը նեղնար : յայտնի էր որ պիտի գար տեղ մը ուր ալ ձիս չպիտի սղմէր : Գիշերն ալ վրայ եկած էր : Ետ դարձայ, եւ աջ կողմի վրայ բացուող աւելի լայն ճամբայ մը ձեռք առի : Զիւրը յոգնած էին : Ես ինքս վար իջայ, եւ ստններէն բռնելով սկսայ հետիոտն յառաջանալ :

Շատ տեղ մը չէի կտրած դեռ՝ երբ մօթը բոլորովին տիրեց չորս զին : Յանկարծ սարսափելի աղմուկ մը լսուեցաւ : Բան մը պայթած էր, բայց ո՞ւր, ի՞նչ, չկրցայ հասկնալ : Ինծի անանկ եկաւ թէ թնդանօթի հարած մը արձակած էին ականջներուս տակ : Հաջորդուն վրայ կոխած էի, ցնցուեցաւ. կարծես թէ լեռը պիտի կործանէր : Ապշած, ու մտաւաւանդ յանկարծակիի եկած այդ տարօրինակ աղմուկէն, պահ մը գամուած մնացի զբոսնուած տեղս . . .

Հաղիւ քանի մը քայլ յառաջացած էի, երբ սքանչացած մնացի : Տեսարանը որ առջիս պարզուած էր, ամէնէն հրաշալիներէն մէկը կրնար նկատուիլ : Զախ կողմս, երկիրքին վրայ, չքեղ լիալուսին մը կը վառէր արծաթ սկաւառակի մը պէս, եւ իմէ ցլէ-քեր կը լուսերփնէին թաւ մարդագետին մը ուր ձիւրը արդէն իսկ սկսած էին ճարակիլ : Փափաք մը ծնաւ ներսս այդ մարդագետին մէջ միսքուելու, բայց իսկոյն մէկ կողմ թողուցի ծրագիրս : Մարդագետինը լեցուն էր անդունդներով որոնց ամենի ու ստեղծանքով

բերանը կ'երեւար լուսնին լոյսով : Լաւագոյն
բանը բրած պիտի ըլլայի գտնուած տեղէս
չնետաւով : Այս մտածումով երկնցայ պառ-
կեցայ խոտին վրայ : Ընկերներուս ընթացքը
միշտ չէի կրնար բացատրել . ինչո՞ւ եւ ո՞ւր
բացած էին : Պահ մը հնթաղրեցի թէ Տօմէնիօ
անպատճառ հրացանիս տէր մնալ ուղեւով
թերեւս այդպէս զիս թողած փախած էր իր
որդոյն հետ , որպէս զի զէնքը պահելու հա-
մար վերջ ի վերջոյ չստիպուի զիս սպաննել :

Մտածումներս սակայն իսկոյն խանդար-
ուեցան : Մարդագետներն միւս կողմէն կայծի
զէս բռնեւ կը ժայթքէին : Ճիշդ այդ պա-
հուն որ պայթումի մը աղմուկը լսուեցաւ ,
բոլորովին նման առաջինին , եւ արձագանդ
առաւ լեռան երախներուն մէջ : Յետոյ , իզ-
մէ հարկը քայլ մը անդին , մարդկային մար-
մին մը երեւցաւ , արիւնագոյն վառքով մը :
Ձկնք , իրենք ալ վախցած այդ անբացատ-
րելի երեւոյթէն , քովս եկան , անհանգիստ
ալուէններին ինծի յառած : Առաջին կայծերը
աննկնուս այնպէս կարծեցի թէ հրաբուխի
մը խառնարանէն գուրս կ'ելլեն . այդ երե-
ւոյթը սակայն ուրիշ տեղեր տարաւ միտքս .
թէքլինքս բանդադուշանքի մը առարկայ
դարձած կը կարծէի : Ու երկար ատեն այդ-
զիս աչքերս յառեցի զէպի այն կողմը՝ ուրկէ
մարդկային մարմինը երեւցած էր , եւ որ
առաւ բոլորովին . անհետացաւ : Ի՞նչ կը
հաշտակէին այդ ամէնը . չիտակը ժամանակ
լուեցայ մեկնութիւն մը տալու , որովհետեւ
եանք , կապարի պէս ծանր քուն մը ընկ-
նց զիս :

Յայտնի չէ թէ որչա՞փ ատեն տեւեց այդ
քունս : Սաչափ միայն գիտեմ որ զէշ երազ-
ներ տեսայ , ինծի տնտնի երեւցաւ թէ մե-
ծաղինդ անկում մը տեղի ունեցաւ իմ շուր-
ջս , թէ այլանդակ , անձեւ մարմիններու
երամ մը կատաղի աղաղակներով իմ կողմս
կիսա պահ մը , վերջապէս բոլորովին անհա-
նայ ու սոսկալի երազներ , երբոր արթնցայ ,
առելը ծաթած էր արդէն ու կը լուսաւորէր
անարան մը՝ որ բոլորովին ապշեցնող զիս :
Անգին դաշտի մը վրայ կը գտնուի , լեռ-
ները հեռուն մնացած էին ու ձիերս կը ճա-
րակէին իմ շուրջս :

— Տարօրինակ բան , պոռացի , ո՞ւր կը
գտնուի արդեօք :

— Սատանայի երկրին մէջ , պատասխա-
նեց ձայն մը :

Իսկոյն ետիս դարձայ :

Տասնըվեցէն տասնըեօթը տարեկան պա-
տանի մը հանդարտօրէն երկնցած էր իմ ա-
մէնէն դեղեցիկ ծածկոցներէս մէկուն վրայ :

— Ո՞վ ես դուն , հարցուցի իրեն :

— Ան՝ որ ձեզ հոս բերաւ , պատասխա-
նեց , նոյն ատեն խնդալէն ճաթելով :

— Բայց ո՞ւր էիր որ :

— Կռապաշտներու որջին մէջ , ու չիտակը
չա՛տ ալ զէշ կացութեան մը մասնուած :

Սկսայ հարցափորձել զինքը :

— Այս կողմերը ծնած մարդ մը , բնաւ ,
որ մը լուր տարածեց թէ ոսկիի հանք մը
գտած է եւ կրցաւ քանի մը օգնականներ
ճարել իրեն : Ես ալ , հակառակ կամքիս
ստիպուեցայ միանալ այդ խումբին , որ թէ
գետինը փորելով ժամանակ կ'անցընէ եւ թէ
գողուլեամբ կ'ապրի : Արդէն այս կողմերը
մարդ չգար , վախճալով որ աւաղակի մը
ձեռքը կ'իյնայ :

— Ի՞նչ եղաւ այդ ոսկիի հանքը :

— Բան մըն ալ չեղաւ : Մեր առաջնորդը
չարունակ ժայռեր կը պայթեցնէր , բայց ոս-
կիի երակ մը անգամ չկրցանք գտնել :

Հասկցայ որ երկու պայթիւնները՝ որոնց
աղմուկը խռոված էր զիս , այդ խումբին
կողմէ եղած էին :

Պատահին շարունակեց .

— Բաւական ատեն կայ արդէն որ կը
փափաքէի լքել զիրենք : Երէկ զիշեր , մինչ-
դեռ մերինները լեռան միւս կողմը կ'երթային ,
յանկարծ ձեզ պառկած տեսայ , ինչպէս նաեւ
ձեր երկու ձիերը : Առանց միւսաներուն բան
մը զգացնելու ետ մնացի , եւ երբ անոնք
անհետացան , ձեզ հոս փոխադրեցի ձեր ձի-
երուն հետ :

Շնորհակալութիւն յայտնեցի իրեն , եւ
հարցուցի թէ ի՞նչ ընելու միտք ունէր :

— Ո՞ւր որ երթաք , ես ալ ձեզի հետ
կուգամ , պատասխանեց :

Ան ատեն իրեն յայտնեցի իմ ճամբորդու-
թեանս նպատակն ու պարտքաները , պատ-

մեկով նոյն ատեն թէ ի՞նչպէս լքուած էի իմ երկդու առաջնորդներուս կողմէ :

— Ապահովարար , ըսաւ պատանին , կրակ մը պէտք է տեսած ըլլան կռապաշտներու ժայռին մօտերը՝ որ հնդիկներու ուխտառեղի մը եղած է երկար տարիներ առաջ : Միայն թէ՛ հիմայ այնպէս կը կարծեն թէ մարդ չի կրնար մօտենալ այդ ժայռին՝ առանց կեանքը վրայ տալու : Մնաց որ այս կողմերը շատ վտանգաւոր են : Մեր ոսկեխոյզները ո՛վ որ տեսնեն , իսկոյն կը բռնեն , եւ կողոպտելէ վերջ լեզուն կը կտրեն՝ որպէս զի իրենց գաղտնիքը չյայտնէ ուրիշներու : Նոյն իսկ կը սպաննեն ալ , եթէ երբեք բռնուողը ուզէ զիմադրել : Ձէք գիտեր թէ որչա՛փ տաժանելի կեանք մը անցուցի իրենց քով , անտանելի կեանք մը զոր բնաւ չպիտի մոռնամ : Պէտք է միշտ հեռու փախչիլ այդ մարդոցմէն , ու մենք ալ լաւ կ'ընենք վայրկեան մը առաջ ասկէ հեռանալով :

— Ես ալ ատիկա կ'ուզեմ , բայց ատկէ առաջ պէտք է քիչ մը բան դնեմ բերանս :

Բօլ , — աս էր պատանին անուշը , — իսկոյն գնաց արմաւ ճարեց , կերանք ու ճամբայ ելանք :

— Ձեր ընկերները , ըսաւ ճամբան , անշուշտ Թանախի անցքը ուղղուած են . մենք կրնանք տակաւին մուծը չկոխած այդ անցքը հասնիլ , եւ նոյն իսկ իրենցմէ առաջ : Դուք լերան մէջէն յառաջացած ըլլալով բաւական կարճեցուցած էք ճամբան :

Եւ սակայն , երբ Թանախի անցքը հասանք , մուծը իջած էր արդէն : Առաջնորդներս չէին երեւար : Յանկարծ , մեզմէ ոչ շատ հեռու վաւռուող կրակ մը աչուրնուս զարկաւ , ու գրեթէ միեւնոյն պահուն ձայն մը պոռաց մեզի :

— Ո՛վ է ան :

— Բարեկամներ , պատասխանեցի՝ Օնօրիօյ ձայնը ճանչնալով :

Արդարեւ Օնօրիօն էր ձայնողը :

— Օ՛հ , մեր ընկերն է պոռաց , եւ իսկոյն դուրս ելլելով մեզ երկուքս առաջնորդեց հօրը քով :

Կ'երեւակայէք անշուշտ թէ վերջին ծայր ուրախացայ առաջնորդներս գտած ըլլալուս համար :

— Ինչո՞ւ այդպէս զիս ձգեցիք ու փախաք հարցուցի իրենց :

— Այդ կողմերը մնալը աղէկ բան չէ , ըսին երկուքը մէկ , ու խաչափնեցին :

Յետոյ , մինչպէս ես գիշերուան արկածներս կը պատմէի իրենց , ըսելով թէ ինչպէս կռապաշտներու լերան վրայէն անցած էի , սարսափի աղաղակներ արձակեցին երկուքը մէկ , վայրկեանը մէյ մը խաչակնքելով : Հրաշք մը կ'ենթադրէին Սատանայի երկրին մէջ ողջ մնալու : Թէ՛ Օնօրիօ եւ թէ Տօմէնկօ տակաւին ինքզինքնին անպահով չէին զգար , առարկելով թէ Կռապաշտներու ժայռը իրենց մէջ շատ հեռու չէ : Ան ատեն , վիզէս կախուած մէտալիսն մը տուի իրենց , ըսելով թէ սուրբի մը մասունքն է ատիկա , եւ թէ ես ալ անոր շնորհիւ միայն կրցայ ազատիլ : Տօմէնկօ երկիւղածութեամբ ձեռք առաւ մէտալիսն , համբուրեց ու ծոցը պահեց՝ լերան սղիէն ազատելու համար : Օնօրիօ ալ նոյն մտածումով հօրը կուրծքին վրայ պառկեցաւ այդ գիշերը : Բօլի յանձնարարութեան վրայ երկուքին ալ բառ մը անգամ չըսի ոսկեխոյզներուն նկատմամբ :

Առտուն երբ արթնցայ , Բօլ անհետացած էր :

— Անպիտանը կ'երեւայ թէ մեր ձիբին մէկը գողնալով գիշերը կծիկը գրեթէ է , ըսաւ Տօմէնկօ :

Անկարելի էր տրիչ հնթադրութիւն մը ընել : Քիչ հաքը հաստատեցի որ Բօլ իմ մէնէն ազուրը ձիւ կազմածս հետը տարած է :

2. ԳԼՈՒԽ

Անձանօք աղաղակներ . — Տօմէնկօ և Օնօրիօ կրկին կ'անցայտանան . — Ջուր փնտռուողք . — Ռօմէն տ'Օրբիէնք կրակէ չըջանակի մը մէջ . — Հարիւրաւոր աքիբ՝ որոնք կը փայլին բոցերուն ետին . — Հրացանի երկու հարուածներ . — Փայտատ . — Վայրի շունքու երամ . — Տօմէնկօ երեսն կ'ելլէ Օնօրիօի հետ . — Վայրի շուները ինչպէ՞ս կը փախցնեն . — Նորէն ճամբորդութիւն . — Դեպի Կիլիկիոն գետին մօտերը . — Տօմէնկօյի անձանգստութիւնը . — Ռօմէն տ'Օրբիէնք կրկին վտանգի մէջ . — Տօմէնկօ կ'ուզէ գերի մը դարձնել գիւղը . — Համաձայնութիւն և բաժանում . — Ձերկու օրէն . . .

Տօմէնկօ վերջապէս կրցած էր դանել իր

գոյցուած ձիւրուէն հետքը : Ամբողջ օրը այդ հետքերուն հետեւեցանք հարթ գետնի մը վրայէն : Զամբան քանի մը բազ սպաննեցինք ուսելու համար : Գիշերը , մեծ լիճի մը եզրը քանակեցանք , եւ որովհետեւ յոգնած էին , իսկոյն թաղուեցայ խոր քուէնի մը մէջ : Մինչդէռ ան ատեն բաւական վարժուած էին այդ արթնալից կեանքին , ու քնացած միջոցիս խնկարծական ազմուկներ ալ խռովք չէին տար ինծի : Եւ սակայն , բաւորովին անծանօթ ազմուկ մը նոյն գիշերը ընդոտտ արթնեցուց զիս : Սուր ձայններ կը լսուէին , ընկեցայ քնած առեւիկ կանչերու եւ կատաղի աղաղակներու : Մեր ձիւրն իսկ ահաբեկած էին այդ ազմուկէն եւ մեզմէ բաւական հեռացած :
— Ի՞նչ կայ որ , հարցուցի երկու ընկերներուս՝ որոնք ինծի պէս արթնցած էին :
— Բան մը չկայ , պատասխանեցին երկուքն ալ , եւ ոտքի ելլելով անհետացան մօթին մէջ :

Իսկոյն իրենց հետեւեցայ , բայց չկրցայ զոնկ հետքերնին : Զկրցայ հասկնալ թէ ո՛ւր գացած էին : Վախը կրկին գրկեց զիս , եւ այսպէս հաղարումէկ ենթադրութիւններ ընել մտնելուի եւ Օնորիօի այս անըմբռնելի անբարոյման նկատմամբ : Կը մտածէի թէ մի՞ գոցէ զիս թակարդի մը մէջ ձգած ըլլան , ինչքէ հետ քաշքշկով մինչեւ հող : Անշուշտ , լռէի ինքնիրենս , երկուքն ալ մօտերը գտնուող Հնդկներու բանակետով մը գացած են , ու շատ չանցած պիտի վերադառնան զիս սպաննելու համար : Այդ միջոցին ոտքս կարծր տարկայի մը զարնուեցաւ : Ծռեցայ ու տեսայ որ հրացանս էր : Պզտիկ մը ապահովուեցայ , որովհետեւ դո՛նէ՛ պիտի կարենայի կնանքս սուղի ծախել իրենց : Կրկին սկսայ բառալանալ , եւ յանկարծ ինքզինքս դտայ կրակ լայն չրջանակի մը մէջ : Զորս կողմս կրակ միայն կը վառէր : Անպիտանները կ'երևայ թէ զիս ողջ ողջ այրել որոշած էին : Աղատուած չկար , կամ դուրս պէտք էի ելլել այդ խռնարանէն եւ կամ թողուլ օր բոցերը մինչեւ ինծի հասնելով զիս այրեն յարդի լիւրի մը պէս : Առանց ժամանակ կորսնցնելու ձեռք առի հրացանս եւ փոթացի դէպի արի կողմը՝ ուր բոցերը նուազ բարձր կ'երև-

ային : Զկրցայ սակայն յառաջանալ : Բոցերուն ետեւէն , հարկաւոր աչքեր ինծի կը նայէին : Հնդկները պէտք էին ըլլալ ատոնք , եւ անշուշտ հող կը սպասէին՝ մեռնիս զիս տեսլու համար : Բարկութիւն մը գրկեց զիս . բարձրացուցի հրացանս , եւ յաջորդաբար այդ բազմութեան վրայ պարպեցի երկու հարուածներն ալ : Արդիւնքը պարզապէս հրաշալի եղաւ : Ամէնքը մէկ փախան , մինչդեռ ես , զարմացած մնացիւր էի թէ ինչպէ՛ս այդչափ բազմութիւն մը կրնայ մէկ հոգիի մը զիմագրաւելու վախնալ :

— Ա՛ս է , ըսի ինքնիրենս , այս Հնդկներուն համբաւեալ քաջութիւնը :

Յետոյ աւելցուցի բարձրաձայն .

— Վատե՛ր , ինչո՞ւ կը փախչիք , մէկ հողի մըն եմ ես . . . մինչդեռ դուք . . . մէկը մէջերնիդ որ իմ դէմս ելլէ չկա՞յ . . .

— Ի՞նչ կ'ըսես կոր , ըսաւ ձայն մը ետեւէս :

Տօմէնկօն էր :

Զինքը տեսնելուս պէս ա՛լ աւելի շեշտուեցաւ բարկութիւնս :

— Անպիտա՛ն , ըսի իրեն , վատութիւնդ քեզի սուղի պիտի նստի . . . հիմայ որ բարեկամներդ փախան՝ այսպէս մէջտեղ ելար , անանկ չէ՞ :

Տօմէնկօ սակայն սկսաւ խնդալ , առանց իմ սպաննական զիրքէս ազդուելու :

— Գնա քնացիւր , ըսաւ հանդարտօրէն , որովհետեւ վաղը շատ դորձ ունինք ընելիք : Յետոյ աւելցուց .

— Այդ բազմութիւնը՝ որուն վրայ հրացանս պարպեցիր , պարզապէս առեսակ մը վայրի ու վտանգաւոր շուններ են որոնցմէ շատ կը գտնուի այս կողմերը : Բարեբաղդաբար ձայն հանեցին , եւ ես ու Օնորիօ կըրցանք ժամանակ գտնել եւ կրակ վառել մեր չորս գին : Այդ վայրի շունները կրակը միայն կրնայ կասեցնել :

Երկուքին քով ալ շատ պզտիկ մնացած էի : Բարեբաղդաբար երեսիս չտուին իմ այլանդակ ընթացքս :

Յաջորդ առտուն օդը շատ գեղեցիկ էր : Զամբայ ինկանք , օրը ութնէն տասը մղոն տեղ կարելու մտադրութեամբ : Պէտք էինք հաս-

նիլ կրկուէն գետին մօտերը , որ քառասուն մըոն հեռու էր մեզմէ : Ճամբան սկսած էր շատ տաժանելի դառնալ եւ յագնեցնել մեր ձիերը :

—Այս կողմերը , ըսաւ ինծի Տօմէնիօ , իրապէս արժանի են Սատանայի Նրկիր անուան , ինչպէս որ զայն կը կոչեն :

Եւ իրաւ ալ , շուրջը ակնարկ մը նետողը տարբեր համոզման մը չպիտի յանգէր :

. . . Քանի գետին կը մօտենայինք , Տօմէնիօ այնքան մտածկոտ կը դառնար :

Երբոր պատճառը հարցուցի իրեն , պատասխանեց թէ քիչ ատենէն իր ծննդավայրը պիտի հասնէր , երկիր մը զոր չէր տեսած բազմաթիւ տարիներէ ի վեր :

Վերջապէս կրկուէն գետին եզերքները հասանք , ու որոշեցինք չորս հինգ օրուան հանգիստ մը առնել՝ կազդուրուելու համար : Այդ չորս օրը տառնց միջազէպի անցուցինք հող :

Երբոր ճամբայ ելանք , Տօմէնիօ սկսաւ բարձրաձայն մեռնախօսել՝ հանդիսաւոր կերպով մը :

—Քսան տարի կ'ըլլայ կոր որ իմ ցեղէս բաժնուած եմ : Մայրս կ'ապրի՞ արդեօք , եւ եթէ կ'ապրի՞ ինչ ըզուենելութիւն պիտի ընէ իր ապերախտ զաւկին , որ հօրենական տունը լքելով դնաց մեր թշնամիներուն , Սպա. նիացուց ասպնջականութեան ապաւինիլ : Պիտի ըսէ անշուշտ ինծի թէ ինք իր կեանքը իր զաւկին չի պարտիր , թէ իր ծերութեան օրերը իր զաւկին օգնութեամբը չէ՞ որ անցուցած է :

Երբեք չէի կարծեր որ Տօմէնիօ կրնայ այդ կարգի բաներ մը զգալ :

Պէտք էր միտիթարել զինքը :

—Հող մի՛ ըներ , ըսի , մայրդ կրնայ երբեմն վշտացած ըլլալ քեզի դէմ , բայց հիմայ , քեզ կրկին իր մօտը առնելով ամէն բան պիտի մոռնայ անշուշտ :

—Աւա՛ղ , պատասխանեց Տօմէնիօ , միակ միջոց մը կայ իր ներդուլութեան արժանանալու համար . . . բայց այդ միջոցն ալ չեմ կրնար գործադրել՝ առանց քու հաւանութեանդ . . .

—Եթէ խնդիրը միայն իմ վրաս է , ամէն բան խնդրէ , երբեք չպիտի մերժեմ , ըսի իրեն :

—Լաւ , յարեց Տօմէնիօ , ես քեզի խօսք տուած էի թէ իբր զաւակ մը պիտի նկատեմ քեզ , թէ քու անձդ նուիրական պիտի ըլլայ ինծի համար . . . ե'ա տուր այս խօսքս , երդումէն ազատէ՛ զիս . . .

—Բայց ինչո՞ւ , հարցուցի՝ բոլորովն զարմացած :

(Շարունակելի)

ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ՎԱՐՓԱՐԱՆ

ԲԱՆԿԱԼԹԻ

Ե. ՏԱՐԵՇԵՐՋԱՆ

ԳԻՇԵՐԹԹԻԿ ՏԱՐԵԿԱՆ 18 ԼԻՐԱ ՕՍՄԱՆԵԱՆ

Առեւտր. վարժարանի հինգերորդ տարին շրջանը սկսաւ : Սոյն վարժարանի նպատակն է լուրջ դաստիարակութեամբ , դործնական գիտելիքներով ուսուցանել ԼԵԶՈՒ եւ ՎԱՌՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ :

Վարժարանը ունի Մանկապարտէզի , Նախակրթարանի եւ Ուսումնարանի երեք դասընթացքները :

Նախակրթարանի աշակերտաց ալ թոյլատրուած է Գերմ. եւ Անգլ. լեզուներն եւս ուսանիլ , Հայ , Օսմ. եւ Ֆրանս. լեզուաց մէջ հարկ եղած յաջողակութիւնը պահպանելով միշտ :

Նկատի առնելով հեռաբնակ ծնողաց նկատման վիճակը , արժան զատեցինք միայն 18 լիրա տարեթաշակով գիշերօթիկ աշակերտ ընդունիլ վարժարանիս մէջ , Մնողք ալ պարտին նկատի առնուլ թէ օտար լեզու սովորելու համար օՏԱՐ վարժարան յաճախելու ըմբռնումը սխալ է եւ միատակարար : Առեւտր. վարժարանի մէջ 11-12 տարեկան պատանիներ հինգ լեզու կը սովորին՝ գրելով , լսողով միասին :

Աշակերտաց արձանագրութեան համար դիմել , ո'չն օր , Առեւտր. վարժարան , Բանկալթի , Ճէտիտիէ փողոց :

Հիմնադիր-Տեղեկ
ՅԱԿՈԲ ԲԱԳԲԱՏՈՒՆԻ

Արժօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Կ. Պոլիս , Ֆինանսերէր եօղուշու , Թիւ 27

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանիս նոր տարեշրջանը կը բկար Սեպտ. 10 (ն. Տ.) Դշ. Տարեթուական է զի- լորթիկներուն համար 16 ոսկի օսմ. որուն էջը վճարելի է սեպտեմբերի սկիզբը, եւ միւս էջը՝ յունվարի մէջ։

Վարժարանիս Տնօրէնին որդին, Մր. Ռ. Անգլերս, Քանատայի մէկ նշանաւոր համալ- արանին մէջ փայլուն ընթացք մը աւարտելէ եւ Ոստոցիչ Արուեսից տիտղոսին արժա- նանայէ վերջ, կը վերադառնայ յառաջիկայ տարի, ստանձնելու համար հաստատութեանս Ազգիերէն դասերուն մեծագոյն մասը, նա- խապարատական կարգերէն մինչեւ բարձ- րագոյն կարգը, եւ աշակերտները վարժեցնելու համար այդ լիզուաւ. ինչպէս զրելու նոյն- րէս խօսելու մէջ. իր դասախօսութեան լե- րուն պիտի ըլլայ միայն Անգլիերէն, Միեւ- նոյն ժամանակ, պիտի շարունակուին անգլի- ար. Թարգմանութեան վարժութիւնները ընդի- վաստուաց իննամբին տակ։

Վարժարանիս պարտէզին կցուեցան վեր- ջերս ընդարձակ գետիններ, որոնք նոր զիւ- րութիւններ պիտի աւան աշակերտներուն զրօ- սանքի ժամերը աւելի հաճելի ընելու։
Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Ռ. Ռ. Բիթի, Պայպըլ-Հատու, Կ. Պոլիս, կամ վարժարանիս Տնօրէն Տր. Ռ. Չէյմպըրսի, նամակները ուղղելով Պայպըլ-Հատու։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սէրայի Լիբէին դէմ

Դե. Նե. Շբ. օրերը առաւօտեան կանու- խեմ մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

Բե. Դե. Ուր. օրերը 6 եւ մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ զեւսք	240,000,000 Քր.
1899ին զանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԶԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ զեւսք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ Լիւնիօնի ապահովագրելոյ կ'ընծայի հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՆԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ։

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով։ Նպաստաւոր պայ- մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները։ Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Լիւնիօնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'են- թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեքամբ գործող ընկերութեանց կ'ապահովա- գրուին։

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԱՆԺԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թանապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

Ա Պ Ա Ռ Ի Կ Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ

ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ ՇԷՐՃԱՅԻ

Ա Պ Ա Ռ Ի Կ Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ
Յանաթորդաց դիւրութեան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոհարեղէններ
ունենալ՝ դիմեցէ՛ք
Կ. Պրիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց թիւ 13



Հեռնայի վաճառատունը ունի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոհարեղէններ ,
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ :
Հեռնայի վաճառատնան գիներն անմիջեղի են :
Հեռնայի վաճառատունը ունի արծաթեղէն
առարկաներ :
Հեռնայի վաճառատունը ունի ժամացոյցներ
եւ արծաթեայ զաւազաններ (շրայքօն) :

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

Հարիւրին քան կանխիկ , մնացեալին հա-
մար շարաթական հարիւրին նկնգ վճարում :
Կանխիկ գնողին համար 100ին 5 գեղջ ,
Գործածուած գոհարեղէններ՝ եթէ մնա-
նաւ չեն՝ 100ին 10 գեղջով ետ կ'առնուին :



Ձեռքի, ոսկիքի և ձեռքի ձեռքի
միտնգամայն մեքենաներ
կը գտնուին :

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ , բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր Ի

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն
աւելի կ'առարեւադործուածը , հաստատունը եւ
դիւրագործութիւնն ըլլալուն՝ բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառ-
տանց մէջ՝

ԲԵՐՍ , Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց .

- | | | |
|--------|---|--|
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկեր խան , Թիւնէլին ետեւը . |
| | | 2. Գարաբէօյ , Թրամիլէյին կայարանին Դիմաց : |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համամ . |
| | | 2. Սուլթան Պէյազիտ . |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի .

Կասաբեալ երաւեստութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐՈՐԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎԱՃԱՌՈՒՄՆԵՐ